

ԲԱԺԱՆՈՐՉԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պոչխարիոյ համար 10 Ֆր.
 Տարեկան 5 »
 Առաստաղակալի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻՆԱՎԱՆԵԼԻ
 —)(—
 Գրութիւնքի և չեմ տրոյր
 —)(—
 Իրանուցման տողը 20 սան-
 քիւն է. երեքին աւելի աւե-
 ցանկերու համար 20 010
 գեղջ կըլլայ:

ՇԱՐՔՈՒՄ

Նամակ և գրաւ գրկեց
 Խոլքարութեանս հասցիին.

Редакция на вѣстникъ
 «Шаркѹмъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՔՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
 АДВОКАТЪ

Weski Thawistongare
M. H.
Vernon (Australia)

ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

—)(—

Ռուս կառավարութիւնը եթէ հայկական խնդրին մէջ այն հա- կաբրիտանեական և շահագէտ գիւրքը բռնեց զոր այնքան հա- մոզիչ կերպով պարզած էր Տօքթ. Բարձրակի և իրմէ առաջ ուրիշ անաչառ գրողներ, գէթ վերջին ատեններս կողկառի 40,000 հայ զաղթականներու հայրենիք վե- րադառնալու համար Դրան մօտ ըրած պնդումները գովելի, ու- րախառիթ և պատուաբեր են ուս կառավարութեան:

Արդարեւ ջարդերը, թշուառու- թիւնը, զաղթականութեան հե- տեանքով պարպուած հայրենի քաղաքները բազմամարդ գտը- ձընելու համար, անմիջական մի- ալ միջոցը հայաստանցի զաղ- թականներուն վերադարձն է:

Ահա պահանջում մը ուս կա- ռավարութեան կողմէ որ բնաւ թուրքիոյ գործին չգալու երե- տոյգն ունի: Դուռը Պ. Զէնովի- շֆի պնդումներէն խուսափելու միջոցներուն կը գիտէ: Ամէնէն աներեւակայելի լրբութիւնով միտում մը կը ցուցնէ յաւէտ հայրենի հողէն հեռացած տես- նել հայերուն հոմ ամբողջ որ օտարութեան մէջ գլուխը պատէ պատ կը զարնէ առանց հանդիստ կայան մը գտնել յաջողելու:

Շատ խորազնին ըլլալու պէտք չկայ Դրան այս գիրքին պատ- ճառներուն թափանցելու համար: Դարերէ ի վեր իր գործած սան- ձարձակ կեղեքումները ինչի՞ պիտի կրնային ծառայել եթէ հայերը միշտ Հայաստան մնային. չէ՞ մի որ իր միակ քաղաքա- կանութիւնն է Հայաստանը ա- ռանց հայու տեսնելու. կամ այն- քան քիչ հայով որ աննկատելի քանակութիւն մը կազմեն: Եւ յետոյ, ուրիշ պարագայ մըն ալ կայ որ Դրան ընդգրկումութիւննե- րուն մէջ ոչ նուազ գեր ունենալ կը թուի: Այսինքն իրեն անձ- նուէր ազգակիցներուն թուրքե- րուն, քրդերուն հանդիստը պի- տի վրդովուի այդ վերադարձով, վասնզի անոնք տիրացած են

զաղթող հայերու ստացած քնե- րուն, սուն, տեղ, արտ իւրացու- ցած են մարդկային ամէն օրէնք ոտնակոխ ընելով, ապերասան աւաղակութեան այդ երկրին մէջ:

Այսպէս, հայը ամէն սեփակա- նութենէ մերձացած պիտի տես- նէ ինքզինքը երկիրը դառնա- րուն: Եւ իրճիթը ուր կը հանդ- չէր, արտը ուր կաշատէր, ու- րիշներուն են այժմ, ինչպէս իր արօրը, իր եղը, իր դաւարը ու ամէն բան:

Եւ սակայն այդ բոլոր տխուր հեռապատկերներուն առջև ա- ռանց ընկրկելու զաղթական հա- յը միշտ իր հայրենիքին կը մը- տածէ: Կարծես անոր օգը ծծե- լը կը բաւէ իրեն ապրելու և մը- լիթարուելու համար: Եւրոպայի և Ամերիկայի բնակարար հրա- պոյրները չտեսներ հայաստան- ցին. անոր ճոխ պալատները չեն հմայեր զինքը. իր օճախը կը յիշէ միշտ. առօրէի յարկ սա- լայատակներու վրայ՝ իր արտին կ'որը և զիւրին արահետը կը փնտռէ, և հոյակապ օտարնե- րու շքեղ արձաններուն քովէն անցած ատեն իր աներ տաճար- ները, անգերեզման նահատակ եղբայրները կը մտաբերէ:

Հայրենաբաղձութիւնը հայ նկարագրին գեղեցկագոյն յատ- կութիւններէն մէկն է, ուժ մըն է զոր երբեք չպիտի կրնան մա- րել բռնութեան անիրաւութիւն- ները: Հայրենիքի զաղափարին կառչած պիտի մնայ յաւէտ. և անոնք որ այսօր իբր վայրափա- տին զաղթականներ չեն կրնար մտնել հոն, վաղը յաղթանակով պիտի թափանցեն անշուշտ, մըղ- ուելով անդիմադրելի մագնիսա- կանութենէն որ Հայրենիքի մըթ- նոլորտէն զուրս կը խուժէ՝ աշ- խարհի չորագին ցանցնուած բո- լոր հայերն ալ մեկնուոյն տաք, քաղցր ու երանակաւ հոսանքին մէջ պարուրելով:

ԳԱՐԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

—)(—

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

—)(—

Որքան ալ պօզանք կարգ մը ան- ձերու գրածներուն պատասխանել, սակայն հարկ կը տեսնեք հեռեւեալ բացատրութիւնները տալ, սանձ մը գրելու համար մեր հակառակորդնե- րուն լրբութեանցը: Շարժումի դա- տին կակնարկենք:

Խնդիրը կատարելագոյն լուսարա- նելու համար ծայրին սկսինք:

Շարժումի 14 թիւին մէջ երեւցած «Հայ գաւաճան մը» յօդուածէն երեք օր ետքը մեր ան տեսնուան արտօ- նաւէր Պ. Ղազարոս Թահմիզեան մեր խմբագրատունը հանդիպեցաւ բա- ցատրութիւն ուղեւու գատի զրոյց- ներու մասին, որոնք հրատարակ ե- լած էին: Մեր սուած քանի մը բա- ցատրութիւններէն համոզուած մեկ- նեցաւ: Երկրորդ օրը նորէն տեսնեք զինքը. այս անգամ անարկի, քրտ- նաթաթու. երկու օտաջարկ կը բե- րէր մեզի. կամ հերքմազիր մը հրա- տարակի առ կուզէր (թէն. իրրեւ բացարձակ աէր թերթին մենէ հա- ճութիւն ստանալու պէտք չունէր այդ մասին) կամ, եթէ չի հրատարա- կուէր այդ հերքմազիրը, մենք, խմբագրիւններս, թուրք մը ստորա- գրէինք յայտարարող թէ ինք բանէ մը տեղեակ չէր, թէ պատասխանա- տուն մենք էինք և թէ մենք են- թեակայ պիտի ըլլայինք դատէն ծա- զիւրք ու և է բարոյական կամ նիւ- կական վեասի. սիրով ընդունեցինք այս ատաջարկը, բացատրելով հանգրձ թէ ինք և թէ մենք զատելի անձերուն մէջ երրորդ գծին վրայ կը գտնուէ- ինք. առջինը ըլլալով Ֆր. Բ. և և երկրորդը Սիլվա խմբագրիւրը, և թէ մենք դատը չանչնուս ապահով ե- յինք: Պ. Թահմիզեան համոզուած մեր ստորագրութիւնը կրող թուրքը աննիւէ ետք գոհ սրտով մեկնեցաւ:

Նոյն օրը, կէս օրէն ետքը Պ. Թահմիզեան դարձեալ խմբագրատուն գալով նամակ մը յանձնեց մեզ՝ ծա- նուցանող թէ ևս կառնէ իր պատաս- խանատուութիւնը: Այս բանը կընէր մեր ստորագրութիւնները գրուանելէ յետոյ. աւելորդ զգուշութիւն, ինչ- պէս ետքին ինքն ալ հասկցաւ: Ճիշտ թերթը մամուլին յանձնելու վայր- կեանն էր. երեւակայելի մեր չփո- թութիւնը: Խնդրեցինք Պ. Թահմիզ- եանէ որ գէթ նոյն օրուան համար շարունակէ իր գերը, առաջարկելով փորձերը իր գրաքննութեան ենթար- կել:

Մերմեց: Ազնիւ Թահմիզեան կա- տաղի Թահմիզեան մը եղած էր. իսկը- քը միտքը օճիքը գործին մէջէն ա-

զատելու տուած, իր փոթը չէր գիտնալ թէ գատը կը շահուէր թէ ոչ:

—Ինչու՞ պէտք, կըսէր, կուզէ դաւաճան ըլլայ կուզէ ըլլայ:

Պ. Թահմիզեան Շարժումի գոյն ունեցող թերթի մը պատասխանա- տուութիւնը յանձն առնելով օր մը չէ օր մը ու և է գատի հեռապատկե- րը զգացած ըլլալու էր, մանաւանդ երբ այսքան ազտուած յուզանե- րով լի է հրատարակը. և արժանա- պատուութիւնը կը պահանջէր որ ինք իբր թերթին ամենէն կարեւոր անդամը, ներկայացուցիչը, մեզի հետ միտք միջնե վերջը և տիրա- նար ազգին ծառայութիւն մը մա- սուցած ըլլալու պատուին:

Բայց, Պ. Թահմիզեան թէեւ յոյժ ազնիւ, այլ և յոյժ երկչոտ և զգուշաւոր նկարագրի աէր անձ է. իր օճիքը ազատելու միակ մար- մաջէն բռնուած, ամէն ուրիշ նկա- տում ստնակոխ ըրած, ոչ միայն թերթին պատասխանատուութիւնը այդքան գահավէժ կերպով ևս առաւ, այլ և յաջորդ օրը—անխելք բարե- կամներու խորհրդով—հերքում գրեց լրագիրներու. հերքում, որուն մէջ ցաւ յայտնելով եղածին համար, «փաստերը անբաւական կը գտնեմ» կըսէր:

Դատարանին առանց սպասելու, երբ վճիռ կուտար, բնականաբար Պ. Թահմիզեան իր գատը կանխաւ կը կորսնցնէր, կամ գէթ՝ այդ վայր- կեանէն դատը շահելը անհաւանական կը դառնար իրեն համար: Վերջէն շատ զգչաց Պ. Թահմիզեան այդ սխալ քայլին համար, ինչպէս պիտի տես- նէք ի ստորեւ:

Նոյն միջոցին Շարժում տագնա- պալի վայրկեաններ անցուց, երբ Տօքթ. Սթօյանօֆ որուն պատմեցինք գործը իր ամբողջ մանրամասնու- թիւններով, մեզ պատասխանեց:

—Պարոններ, ոչ միայն կը ստանձ- նեմ ձեր թերթին պատասխանատու- ութիւնը, այլ և ձեր գատին պաշա- պանութիւնը:

Տարակոյս չկայ թէ Պ. Թահմիզ- եանի մեզ հանդէպ բռնած անպատշաճ ընթացքէն ետքը, մեր տեղը ուրիշ- ներ ամէն յարաբերութիւն պիտի խզէին իրեն հետ. բայց մենք իր անձին համար նոյն ապահովութիւն- ները տալէ երբեք չը զաղրեցանք:

Երբ ասկէջ քանի մը օր առաջ մեզ հասաւ դատական առաջին թուրքը, մեր խմբագրիւններէն մէկը Պ. Թահմիզ- եանը առնելով փաստաբանին սա- րաւ, փաստերը, վկաները, թղթերը և ամէն ինչ որ պէտք էր հաղորդե- րու համար:

Բայց ստոնց հարկ չմնաց. Պ.

Թանձրեանի տեսք ուրիշ էր . միշտ օձիքը ազատելու խնդիրը . ի դուր փաստարանը բացատրեց դատին աղ- նիւ հանգամանքը , եւ շահելու մեծ հաւանականութիւնը :

— Ինչպէ՞ս դատ վարեմ , եղբայր , ըսաւ Պ . Թափալեան , երբ հերքում տուած եմ . ա՛խ եթէ այդ սխալը գործած չըլլայի :

Հասկցուցինք իրեն թէ այդ սխա- ւը — արդարեւ խոչորկէկ — կրնար դարմանուիլ : Բայց Պ . Թափալեան միշտ օձիքը ազատելու հետամուտ ա՛լ խօսք մտիկ չըրաւ . եւ փնտելու գնաց ուրիշ փաստարան մը որ դատը ուղղակի մեր վրայ փոխանցէր :

Այդ կէտին վրայ եւս համաձայնե- ցանք . մեր փափագն էր արդէն :

Ուստի որոշեցինք , Պ . Թափալեանի հաւանութեամբ , որ մեր առաջին օրէն տուած ստորագրութեանէն դատ «հայ գաւաճան մը» յօդուածը մեր ձեռա- գրով եւ իսկական ու կեղծ ստորա- գրութեամբ գրելով յանձնենք ի- րենց : Այսպէս ալ ըրինք . եւ սկսանք սպասել դատի օրուան , ուր իբրեւ վկայ կոչուելով , բերանացի եւս պի- տի յայտարարէինք , դատ բացող անձն ալ անուշա պիտի ձայնակցէր մեզի , ու դատը , դատարանի վճռով , մեր վրայ պիտի դառնար : Մանա- ւանդ որ Պ . Թափալեան արդէն կան- խաւ հերքած ըլլալով , եւ փողո- ցային թերին ալ «արգարութեան յաղթանակը» հռչակած ըլլալով այդ հերքումը , իր կողմէն կատարեալ գոհացում տուած կը սեպուէր :

Խնդիրը այդ կացութեան մէջ էր երբ Պ . Թափալեան եւ բերաւ մեզ յօդուածին ձեռագիրը — առաջին ստո- րագրութիւնը միշտ քովբերին կը մնայ — եւ ամօթխած փայտով մը հե- տեւեալ առաջարկը ըրաւ մեզ .

— Պարզ թուղթ մը գրեցէք , ըսաւ , սպասէ . « Պ . այսինչ , դուք գաւաճան մըն էք եւ ձեր թերթը ազգադաւ է » :

Պ . Թափալեան «դատ բացողին» կողմէն կուգար , եւ անոր պահանջ- քին համեմատ կարգիւէր մեզի ուրիշ

ո եւ է բառ աւելցնել : Նախ՝ այդ արարածին հրահանգներուն համա- կերպելու գաղափարը ինքնին պըժ- գանք կազդէր մեզի : Յետոյ դիտել տուինք Պ . Թափալեանի թէ այդ ար- տառոց պահանջումին մէջ մտաւառո գիտում մը կար , թէ բանաւոր չէր ստորագրել թուղթ մը որ խնդրին գէթ քանի մը էական պարագաները չէր պարզեր : Մեր հրապարակագրի պաշ- սօսն էր որ թագուն աղտեղութիւն մը պարզելու տխուր հարկին մէջ զրած էր մեզի , եւ իբր այն կողմ- ինք ներկայանալ դատարան . բայց նոյն իսկ եթէ իբր լոկ անհասաներ ներկայանայինք , ո՛չ ոք իրաւունք ունէր մեզմէ յափշտակելու արամա- րանութիւնը : Սիլվան , Յր . Գ . ն , եւ որ ի կարգին , եւ մարդու մը չոր ու ցամաք կերպով «պարոն , դուն դա- ւաճան ես» ըսել պարտաւորել եւ այս բոլորը «դատ բացողին» մանօրբանե- րուն եղ քսելու համար :

Պ . Թափալեան ինք ալ զգաց մեր դիտողութիւններուն բանաւոր ըլլա- ւը : Բայց ինքն ալ իր նկատումը ունէր : Քանի որ ինք պատճառ եղած էր Պ . Թափալեանի մեզ պատասխա- նատու ըլլալուն , ա յո՛ւ յի իր բա- րեկամը ազատել կուզէր , մնացեալը փոյթը չընելով :

Եւ սակայն մենք սկզբունքով ընդունեցինք զուցացում տալ Պ . Թա- փալեանի բերած անհեթեթ առաջար- կին . միայն թէ մեր վերջնական ու- րոշումը առ հետեւեալ օրտան յե- տաձգեցինք՝ փաստարանին խորհուրդ հարցնելու համար թուղթը խմբագ- րելու պատշաճ ձևին վրայ :

Պ . Թափալեան հետեւեալ օրը մեր պատասխանը անկելու չեկաւ :

Եւ մինչեւ այսօր եկած չէ : կը սպասենք իրեն :

Ուրեմն խելքը վրան եւ ծայրայեղ չարակամութեամբ թուեալ որուած մէկը չկրնար ըսել թէ մենք պա- տասխանատուութեանէ խուսափած ենք , թէ դատէ կը վտխանք :

Բացարձակ ստուծիւն է ասիկա : Եւ յետոյ վախճալու բան չկայ . մենք , մեր յօդուածին պայմաննե- րուն մէջ , դատը ապահովարար կը շահինք : Երբ «դատ բացողը» անմե- ղի , մեղաւորի , պատիժի խօսքեր կընէ , ծիծաղելու կը շայտէ պարզա- պէս : Նոյնպէս մեզ խնդացնել կու- աայ իր «Հայ Ժողովուրդը» :

Արդարեւ օր չանցնիր որ մէյ մէկ միմտական յօժարաւորներով չը մեծարէ իր սիրելի «Հայ Ժողովուրդը» , հայրապետի մը կամ զօրավարի մը հովերը անկելով : Ունայն ճիւղեր : Ատանկ պոտաախօսութիւններով ջուրին երեսը չեն հաներ մարդը : «Հայ Ժողովուրդը» սղբերգական ձևերէ յափրայած է . այդ կարգի մանօրբանքու ականջ չի կախեր :

«Հայ Ժողովուրդը» ուրիշ բան կը պահանջէ : կը պահանջէ որ «դատ բացողը» երկաթով մը բացատրել հաճի թէ՛

Իր պատուական անունը ի՞նչ բան ունի լրտեսական նամակի մը տակ :

Ի՞նչպէս կըլլայ որ վտանաի հա- զարաւոր հայերուն մէջէն Յր . Գ . ն ճիւղ այդ անունը կընարէ , անունը այն մարդուն որ իր ստանձնած յանձնառութեանց գործադրումին շա- ստոնց սկսած էր : Աս ի՞նչ զուգա- դիպութիւն է :

Ի՞նչպէս կըլլայ որ Յր . Գ . ն իս- կոյն ձերբակալել տալով երախա- տութեան տակ չաններ :

Ի՞նչպէս կըլլայ որ Յր . Գ . ն երեք ամիս քաղաքս թափառելէ ետքը , դատը սկսելու մօտ կծիկը կը դնէ քաղաքէս :

Մեր միւս «ինչպէս կըլլայ»ները դատին կը վերապահենք :

Հիմակ լրջօրէն առ հարցումներուն թող պատասխանէ , զերասանութիւնը ետքի պահելով :

Վ Ա Ր Դ Պ Ա Տ Ր Ի Կ Ո Ւ Ի Յ Ի Շ Ա Ս Ա Կ Ա Ն Ե Ր (19)

Նրանք միայն նկարագրում էին իրանց ծանր վիճակը . իսկ այդ վի- ճակը իրանց ձեռքով ու զոհողու- թեամբ փոփոխելու մտքից բոլորովին հեռու էին : Դրանք գոհ էին միայն նրանով որ կարողանում էին մի քիչ գրամով աշխատել , իրանց երկրում ու- նեցած պարտքերը վճարել եւ կիսա- մերկ ընտանիքը կուշա օր սոված պահել : Բնականաբար իմ մէջ հարց էր ծագում եթէ այս մարդիկը ապրե- լով Ռուսաստանում կարող են լաւ նկատել թէ այս երկրում ապրող մարդիկ ապահով են , սէր են իրանց ստացվածքի եւ երեխաների եւ կա- նանց եւ սրանց մէջ չէ զարթնում հայրենիքում իրանց վիճակի ծան- րութիւնը զգալու տրամադրութիւնը եւ այդ վիճակը փոխելու փափագը . ուրեմն էլ ի՞նչ կարելի էր սպասել երկրում գտնուողներին , որոնք լաւ կեանք չեն տեսել եւ կարծում են նախախնամութիւնը իրանց համար այդպիսի վիճակ է սահմանել եւ ի- րանք անկարող են այդ վիճակը բա- րեփոխել :

Այս հոգեկան դրութեան մէջ էի երբ վրա հասան կարնի 90 թւականի խոտովութիւնները . քիչ ժամանակ յետոյ հետեւեց Գում-Գարուի ցոյցը , որ կազմակերպողները էին Մու- բատ , Նշան , Մ . Մամբէ , Ճահան- կիւլեան եւ ուրիշները : Այդ երկու

գործն էլ անհղին ողբերգութիւն ա- ռաջ բերին Ռուսահայերի մէջ , ոգե- լորեց եւ Բաթումի հայ հասարակու- թիւնը , նրանց հետ միասին ի հարկէ եւ ես : Մի քանի օրուայ մէջ մօտ եր- կու հազար բուրի ժողովեցինք Բա- թումում : Ոգեւորված նւիրատուները որոշեցին հաւաքած գումարով գէնք գնել եւ անմիջապէս մի զինված խումբ անցկացնել Տրապիզոնի նա- հանգը : Ոչ ոքի համար պարզ չէր թէ Ռուսաց կառավարութիւնը ի՞նչ գիրք էր բռնելու հայկական հարցի վերա- բերմամբ . այդ կողմից դեռ վախ չը կար , մանաւանդ միաժամանակի հա- մար , որոնց ուղեղում սեղմվել էր այն միտքը — թէ Ռուսաստանը ինքն էր հայկական հարցը գրել եւ բոլորա- կան զիջումացի սեղանի վրա . . .

Երբ եկաւ Հնչակեան կուսակցու- թեան կարմիր տառերով շրջաբերա- կանը որը ոգեւորված կերպով յայ- տարարում էր հայ յեղափոխական տարրի բողոքի առջին գործնական քայլը , ոգեւորութիւնը կրկնապատ- կվեց եւ Ռուսահայերի ազատասիրա- կան երեւակայական ծրագրիները հասան իրանց գաղաթնակալին . . .

Ետևով Պոլսից եկան երեսուցի չափ հայ երիտասարդներ , որոնք մեծ մասամբ Պոլսի փողոցային հե- րոսներից եւ բանտից փախած մար- դասպաններ էին : Թիւրքմանութեամբ մենք կարծեցինք որ մեր ընկերները էին ուղարկել զրանց . վերջը պար- զվեց որ զրանք ուղարկուած էին

Պոլսի հայաստանականներից : Նրանք եկել էին կովկասից զէնք ստանալու եւ երկիրը անցնելու :

Ի հարկէ երբ խնդիրը պարզվեց , ես սաստիկ հակառակեցի այդ պա- րոնների վրա դրամ ծախսել . այդ տեղ իմ եւ ձերահանի յարաբե- րութիւնները բոլորովին լարվեցին . իմ հակառակութիւնը բնկաւ Պոլսից եկած հակառակորդների ականջը . նրանք իմանալով որ մենք միաք չունենք զէնք եւ դրամ առու , սաս- տիկ կատաղել էին ու բախարձակ բո- ղոքում եւ սպառնալիքներ էին կարգում : Մի կարճ ժամանակում այդ լուրը տարածվեց ամբողջ Բա- թումում , եւ սրպէսզի բոլորովին չը բացուի ու կառավարութեան ական- ջը չընկնի , ես առաջարկեցի որ զէնք ու դրամ տանք , բայց ես էլ նրանց հետ գնամ , որպէսզի այդ պարոնները զէնքերը չը ծախեն , ո- րովհետեւ ինձ համար շատ պարզ էր որ զուգափարով չը սողորում մեծ քաղաքի փողոցային տարբը անկա- րող կը լիներ զաղափարի համար անձնազոհ կոիւ մղել :

Այդ որոշումից յետոյ , մի քանի օրով Փոթի գնացի , այն տեղ դրամ ձարելու համար . մի տաճկահայ երի- տասարդ այնքան ոգեւորվեց որ իր սիրած ու յատուկ պատուիրած բեր- դանը նուիրեց : Վերադարձայ Բա- թում : Այնտեղ տեսայ ռուսահայ սպա Ն . . . որը նոյնպէս եկել էր խորհրդակցել մի քանի հայերի հետ :

Նա առաջարկում էր բանասեղծական խոչոր ծրագրեր , որոնք անհղին գումարների պէտք ունէին եւ բոլոր- րովին անիրականալի էին , այսու ամենայնիւ . իմ բարեկամները շատ էին ոգեւորվել — պատրաստվում էին այս վառվառ սպայի ծրագրիները իրա- ղործելու համար միջոցներ ձեռք առ- նել :

Վերջապէս այդ խումբը մի օր էլ հրաւիրեց ինձ եւ ձերահաններն որ համաձայնվենք եւ որոշ պայմաննե- րով ու մի քանի ստորագրութիւննե- րով նամակ գրենք Հայաստանի խրի- րագրիներին հնչակեանների հետ մի- ասալու համար : Այդ պայմանները մանրամասնօրէն չեմ յիշում . բայց լաւ մտաբերում եմ , որ շատ որոշ , կտրուկ եւ զուտ յեղափոխական էին յոյս չունէի որ Հայաստանի ղեկավար- ները , որոնք հայերս ողբերգում էին եւրոպացի հայասէրների կարճ , եւ զէ- պի գերի հայերս պատճառական ըզ- րացմունքով լինամակներով կընդու- նէին այդ պայմանները եւ առաջար- կութիւնը : Այդպէս էլ եղաւ : Դրա- նից յետոյ Պ . ձերահանի վարկը ին- կաւ . եւ այդ միամիտ ու անկեղծ հայը էլ չկարողացաւ դրամ ուղար- կել Լոնդոնի եւ Պոլսի հայաստանա- կան գործիչներին , որոնք մինչեւ այդ ժամանակ հայկական ազա- տութեան համար համար հաւաք- ուած գրամով ոչ մի ժանգոտ զէնք էին տակ եւ ոչ էլ մի բուռն վառող :

անշուք ու անկերպարուն վիճակի մը դատապարտուած է մանաւանդ այն օրերէն ի վեր, երբ քերական պէտքերուն Ոստանէն հայ տարրը վտարելով իրենք ժողովուրդը են հայոց օստանիկ ցեղի սեփականութիւնը եւ բնակարանը եղող այդ գրախառնման վայրը : Երբ վանքին կը մտնանք, վար կիջնենք ձիւրէն, ու զանոնք երբորդի մը խնամոց յանձնելով, սրատարով կը դիմենք զէպի տաճարը, զէպ այն հանգրուան ուր հայ պատմիչին աճիւնացած մարմինն է ամփոփուած : Հոգիի ամենաջերմ խանգով կը համբուրենք ու կը հոտուրտանք այն քարերը, որոց ներքեւ պատմական ու ազգային տեսակէտով անգին գանձ մը կայ թաղուած : Հոս միտքս եկաւ յիշել այն յուզուած նկարագրութիւնը՝ զոր հանգուցեայ Գարեգին Եպիսկոպոս Սրբաւնձտեանց այս վանքին ու Եղիշէի համար գրած է () : Երկար ու լուսն Երբայրեղով այդ վեհաշուք վայրը մեր մտքին կը պատկերանայ « Եւս է կոյր աչօք, քան կոյր մտօք » նշանաւոր խօսքը զոր տասն ու չորս դար առաջ ուղղած է մեր կարգ մը ազգայն ու եսասիր իշխաններուն : Եթէ իրեն արժանի ներկայացուցող՝ Լուսինայի ազգայն ցուցուած ըլլար Եղիշէն, այսօր Թասթէն ու Միլիթանէն պակաս ծանօթ չպիտի ըլլար սեփականութեան այդ անգին գոհարը :

ՊԵՏ

[Շարունակելի]

ՆԱՄԱԿ ՌՈՒՄՆԻԱԷՆ

—)(—

Պոստիչ 11 յունիս

Տեղիոյ ուսուցչին և քահանաներուն հերքման գրեթէ յիշուած մէկ քանի բառերը բաւական են զողովար մը կազմել տալու համար անոնց բարոյական նկարագրի մասին :

«Պատր ջուրի մէջ որոսոյսը» ըսելով ինչ կը մտնէք, թէ կը ցանկամ Պո. քրէչի հայ վարժարանին ուսուցչութեան պաշտօնին և կամ քահանայութեանն : ո՛չ, զիս լաւ կը ճանչնաք, ուսուցչութեան նուիրուած չեմ, իսկ քահանայութեան ընա :

Անձնական ատելութիւն մը չունիմ ձեզ զէմ, ինչ որ ձեր ազգային կեանքին կը պատկանի՝ ամէն հայու իրաւունքն ու պարտականութիւնն է քննադատել ձեզ ուղղութեան բերելու համար : Հապա ինչ կուղէք, իրոց ներկայ վիճակին մէջ ըսէի թէ « ձեր կարողութեան չափով կը ջանաք հայութիւնը վառ պահել այստեղ » և ուրիշ ատոր նման գովեստներ չուայլէի, երբ ու է կարողութեան չափ չեմ տեսներ ձեր գոր-

() Գարեգին Եպիսկոպոս Սրբաւնձտեանց իրրեւ սրբաճար հայրենի երկրին, Ազգ. պատմութեան ու աւանդութեանց (13) օտմ. ոսկի կտակ մը թողած է Եղիշէի գերեզմանին արժանի դամբարան մը կանգնելու, որպէս զի այդ բարձր գրապատ գերեզմանը՝ երկրի մէկ իտրչը անշուք չը մնայ ու անոր յիշատակը չը թառամի :

ծունէութեան մէջ և գովեստի արժանի ոչ ինչ :

Դուք ձեր պաշտօնավարութեան մէջ յաջողութիւն մը եթէ ունեցած էք, այդ ալ ձեր խղճի ձայնը մարտնչիկ եղած է : Եւ, քան բնական դարձած է ձեզ ձեր եղական ընթացքը սր երբ մէկը կելլէ կը քննադատէ ձեր յոռի գործերը, դուք ալ կապչիք, կը զարմանաք թէ արդեօք քննադատելի կարող էք ըլլալ :

Քանի որ դուք և ձեր պաշտօնեաները կը ջանաք ամէն ինչ հաղարարութեան վրայ բեռնընել, սա պարզ հարցումը կուղղեմ ձեզ : Նախորդ պարտաճանաչ քահանաներու և ուսուցչներու օրով ինչու՞ հոգաբարձութիւնը (միշտ միեւնոյնը) չէր համարձակած պահանջել որ յունական գլխարկ դրուէր, զպրօցին մէջ հայոց պատմութեան դաս չաւանդուէր, հայերէնի դասը օրուան մէջ մէկ ժամուան վերածուէր և և և և :

Ձկարծէք որ հոգաբարձութեան պաշտօնին կը հանգիստանամ, չէ, բայց լաւ գիտող մը կը տեսնայ թէ դուք շատ կը նպատակաւ անոնց զէպ Ռուսիանցում ձգտումին՝ ձեր պաշտօններու թոյլ ու զանցող կիւտարմամբ :

Վերջերս պանդուխտ հայ քահանայ մը կուգայ զիս կը գտնէ խնդրելով որ ուսական դեռապանատունը ցոյց տամ, անցողիկը վիզէ ընել տալու համար— Ինչու՞ եկեղեցի չես երթար, կը հարցնեմ իրեն : Գոցի, կը պատասխանէ վարանոտ, քահանաներէն մէկը գործ ունի, իսկ միւսը զբաղած է, . . . Հոգաբարձութիւնը արդիւնց զիրենք օգնելէ այդ խնդր քահանային : Կը վստիչ :

Ձէ՛, ալ բաւական է, ձեր կողմէ լուրջ աշխատութիւն կը պահանջուի և ոչ հայհոյակց հերքմանը : Տեղաբարձութիւններու գէմ : Գովեստներ գրելու մէջ առատաձեւն պիտի ըլլամ՝ եթէ անոնց գոյութիւնը կամ չգոյութիւնը պիտի ըլլայ միայն ձեր կէտ նպատակին :

Սախա-Մուքի

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Սօֆիայի մէջ կապուտ հազի համաճարակ ծագած ըլլալով, Պուլկարիոյ իշխանուհին, նախարարաց ըզմանքին համակերպելով յունիս 21 ին էպէնթալ մեկներ է հետ տանելով երկու վոքրիկ իշխանները :

— Ն. Բ. Յէրտիւնանտ իշխանը քաղաքս ժամանած է :

— Հրատարակուած վիճակացոյցի մը նախելով Պուլկարիոյ մէջ 44է0 նախնական վարժարաններ կան, որոնց 4003ը պուլկարաց, 1284ը իսլամաց,

39ը բուսաց, 13ը Հայոց, 3ը Գաղղիացոյց, 2ը Ռուսիացոց և 1ը Ռուսաց կը վերաբերին : Այս գոյրոցներու համար կառավարութիւնը տարեկան 8,268,067 ֆրանք կը ծախէ : Ուսուցչաց թիւն է 6,886, ուսուցչուհիներուն՝ 1443, աշակերտաց 247,060 և աշակերտուհեացը՝ 100,840 :

— Ինչպէս յայտնի է, Գերմաններու քրիստոստուրբ Գայդէրը մտերմ պիտի այցելէ Սուրազէմ : Այս ընդունելութեան համար Օսմ. կառավարութիւնը 200,000 ոսկի ծախս պիտի ընէ, որովհետեւ Վիլհէլմ պահանջեր է որ իրեն համար առանձին նաւահանգիստ շինուի, և միայն ատոր համար 60,000 ոսկի պիտի ծախսուի :

— Գաղթականներուն հոտանքը զէպի Հայաստան՝ ս'սեր է բաւական կարեւոր թուով : Մինչև մայիս 31 անցողիկ օտացեր են 350 հոգի : Բարեգործական ընկերութիւնը նպատակ միջոցներ չունի հայրենիք գարձող այս խնդր գաղթականներուն օգնելու : Գարձի հոտանքը շարունակական է :

— Պուլէն կը գրէն « Բուռիէ տէ Պալքանի » թէ 30 սոֆթա, քանի մը հայեր ու քանի մը թուրքեր ձերբակալուած են : Երեսուցի սա է եղեր որ ընաւ զրգուութիւն չի տրեր ոչ հայերուն ոչ տաճիկներուն մէջ : Պատրիարքը պալատ գացեր է Սուլթանին քարտուղարն հաւատելու թէ հայ ազգը հանդարտ պիտի կենայ () և թէ Սուլթանէն կուպսէ խոստացուած բարեփոխումները : «Մանիթէօն Օսմանիպի» խրատագրատան մէջէն տեսակ մը պոմպա գտնուեր է, որ բնավնաս չէ պատճառներ : Այս անհաճոյ գիտան է թերեւս սկզբնապատճառը ձերբակալութեանց :

— Յիլիպէ հրատարակուող թրքերէն «Միւլաղէն» լրագրին մէջ կը շարդանք : « Եւրոպ մը հայ գաղթականներու թուրքիս վերագարձէն ետք, լրտեսներ զրկուեցան Պուլէն ու Էտիրնէէն՝ օսմ. կառավարութեան կողմէ, զեւ Պուլկարիա կեցող հայ գաղթականներուն գաղափարներն ու իղձերը հասկնալու համար » :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ՍԵՐՊԻՆ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՆ

—)(—

Նախկին թողաւոր Միլանի Սերպիա վերադառնալէն ի վեր այդ երկրին մէջ քաղաքական գործերը և ձգտումները բոլորովին ստարքեր զոյն և ուղղութիւն առին : Կերեւի թէ Միլան՝ տակաւին մինչև և այսօր չէ կրցած

մարտի 1885 ի ամօթալի պարտութիւնը և այժմ կրկին շրջապատուած իր համա ոհնեբէն տեղոտ գործունէութեան մը մէջ է : Պուլկարիոյ սահմանազրի վրայ զօրք կը համախմբէ : Բանակի մասին նոր նոր կարգադրութիւններ կընէ և սահմանազրի երկայնութեամբը շրջապարթիւններ կը կատարէ : Եւ ո՞վ գիտէ թերեւս ամէն զմանգ աչք առնելով պիտի ուղէ 85 ի նախատիւրը սրբել ջանալ : Եւ ատոր համար էր որ վերջերս Սերպո—Պուլկարական մտաւորութեան մասին յուզիչ շշուկներ կը պատին :

Պուլար մամուլը՝ մանաւանդ ընդգլմադիր կուսակցական թերթերը հրաւէր կը կորզան կառավարութեան որ վտահ ըլլալով ամբողջ աշխի միահատու պաշտպանութեան վրայ, արթուն գտնուի ու է պատահականութեան զէմ և ժամ առաջ զէնք և տրեխ ճարէ պուլկար քաջերու համար, միեւնոյն ժամանակ Միլանին յիշեցնելով պանծալի Սլիվիճան և պուլկարական զէնքի կարողութիւնն ու փառքը : Կրտսի նաեւ թէ պատերազմական նախարարութիւնը արդէն միջոցներ ձեռք առած է սահմանազրի պաշտպանութեան համար :

Ձէ կարելի այժմէն որոշել թէ որ ստոյճան կարեւորութիւն պէտք է ընծայել բոլոր այս իրարանցումներուն և թէ արդեօք կարելի է ենթադրել որ Սերպեր այնքան շուտ մոռնալով իրենց եղբայրական հաշտութիւնը և համբոյրները՝ երկրորդ անգամ գործիք գառնան Միլանի ձեռքը, սեղի տան անոր « Կնդրիքներուն » և եղբայրասպան նոր կիւ մը սարքեմ պուլկարներուն զէմ՝ առանց լաւ մը կշռելու թէ իրենց համար ինչ ձախող հետեւան ներ կարող է ունենալ այդ տեսակի կալ մը :

Սակայն իրողութիւնը սա է որ այս անգամ Սերպիոյ մէջ սրտակարգ շարժում կը տրի : Վերջին երեսփոխանական ընտրութիւնները, Վլատան Ետրկի իշի կուսակցութիւնը, զինուորական խորհրդի Նիլ զօխարուելը, Սերպ բանակի պուլկարական սահմանազրի վրայ կեդրոնացումը, Սօֆիայի զինուորական կցորդ Վասիլի ետ կանչուելը և զեւ կարգ մը զէպքեր ցոյց կուտան թէ ընդհանուր հրամանատար Միլան տեղը հանդարտ չը կենար և կենալու ալ տրամադիր չերել իր մինչև և որ նոր և աւելի աչքու գաւ մը շառնէ :

Սակայն Սօֆոպոտա կը կարծէ թէ պուլկար հայրենասէրները պէտք է չափ ու սահման դնեն իրենց կռանդին և երբեք չի մոռնան աւստրո—բոս համաձայնութեան մը գոյութիւնը, որ

կուռի առաջին նշանին կրողստէ կուռ տալու համար թէ՛ Սերպիան և թէ՛ Պուրկարիան . . .

Թեքեա չափազանց յոռետես է «Սվօպօտա» իր այս կարծիքովը : Բայց եւ այնպէս ամէն պարագայի մէջ կարելի չէ հերքել թէ պատերազմ մը որ Սերպիոյ համար աղետալի կրնայ ըլլալ՝ է հարկէ իր վնասները պիտի ունենայ նաեւ Պուրկարիոյ համար :

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Սպանիացիներուն վիճակը երթալով կը ծանրանայ թէ՛ Բուպարի մէջ և թէ՛ Փիլիպպեաններուն : Ապստամբապետ Ակուինալատո կը զարնէ կը փակցունէ սպանիացիները Փիլիպպեաններէն : Բնիկ զօրքերը թշնամիին կողմը կանցնին : 500 սպանիացիներ անձնատուր եղեր են , և 3,000 գերի բռնուեր են : Մանիլայի վիճակը անտանելի է . վերջին լուրի մը համեմատ անձնատուր եղեր է : Փիլիպպեանները ապստամբութեան վառարան եղած են :

Մանիլայի մօտալուստ անկման լուրը սաստիկ տխրութիւն պատճառեր է Մատրիտի մէջ : Պ. Սալասոյա շատ ցաւեր է կարգալով Աւիուսի զօրավարին պաշտօնագիրը որով հրաժարական կուտայ : Այս զօրավարին ընտանիքը գերի բռնուեր է Ակուինալատոէն, որ շատ յարգանքով վարուեր է անոր հետ :

Լաւատեղեակ աղբիւրէ կը ծանուցուի թէ Բամարա ծովակալը, որուն Գաաիքսէ մեկնումը ծանուցուեցաւ անցեալները, Սուէզի ջրանցէն անցնելուն պէս, ամերիկացի ծովակալ Սամսընի զրահաւորները Սպանիա պիտի երթան սպանիական նաւահանգիստները ուժեղացնելու :

Սանթիակոի պաշարումն ալ կը շարունակուի միեւնոյն յամառութեամբ, և հակառակ սպանիացոց կատաղի դիմադրութեան ամերիկեան նաւերը կրցեր են ցամաք հանել իրենց զօրքերուն մեծագոյն մասը : Սէրվէրա ծովակալն ալ իր նաւազները ցամաք հաներ է՝ Սանթիակոի պաշտպանութեան համար :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Պուրկար կառավարութիւնը հինգ միլիոն ֆրանքի առաջին փոխառութիւն մը կնքեր է գերման պանքաներու խմբակի մը հետ :

Մոնթենեկրօի իշխանը հեռագիր մը ուղղեր է Սուլթանին որով շնորհակալ կըլլայ Պէրանի մէջ բարեկարգութիւնը հաստատելու համար ձեռք առնուած միջոցներուն մասին :

Մոնթենեկրօի սահմանադրութիւն վրայ խաղաղութիւնը սկըսեր է վերահաստատուիլ : Ալպանացիք իրենց գեղերը կը վերադառնան :

Օսմ. պանքային և հանրային պարտքի վարչութեան միջեւ կարգադրութիւն մը եղած է

300,000 ոսկիի վճարման իբրև թերհաշիւ սուսական յեանեալ սուզանքին առաջին վճարման :

—Բ. Գուռը Լոնտոնի, Բարիլի, Բեթեկապուրիի և Հոտմի իր գեսպաններուն շրջաբերական մը զրկեց որով կը բողոքէ առանց իր հաւանութեան Կրեաէի մէջ ըլլալիք ու է կարգադրութեան դէմ :

—Կ. Պուլտէ հեռագիր մը կը հաստատէ թէ Եոթկիոս իշխանի Կրէտէի կառավարչութեան ընտրելութիւնը մէկ կողմ ձգուած է : Լոնտոնի մէջ կատարուած խորհրդակցութիւններու հետեւանօք, ծովակալները հրահանգ ընդունել են համաձայնելու Կրէտական ազգ. ժողովին հետ կըզդիին ներքին վարչութեան մասին, որուն հոգը պիտի յանձնուի այն ժողովին՝ ընդ հսկողութեամբ ծովա՛ւաներու : Փրանսա, Ռուսիա, Անգլիա և Իտալիա դրամատէրներու խմբակի մը հետ պիտի բանակցին՝ վարչութեան պէտքերուն համար փոխառութիւն մը կնքելու :

Ն Ա Մ Ա Ն Կ Ա Տ Ո Ւ Փ

—)(—

Շուվարի քահանային նորանոր անպակասութեանց մասին յաջորդ թուով պիտի խօսինք :

—Ամերիկայէն խմբադրութեանս ուղղուած է նամակ մը սա հասցեով . Աւետիս Եարման Զմշկածպոյցի : Ով որ է թող գայ անէ :

Դ Ե Ս Ո Ւ Դ Ե Ն

—)(—

Պուլոյ եղևնադատ սուեանը ցկեանս բերդարգելութեան դատապարտեր է բերացի Թուրքոսը որ խռովարարական նիւթեր հայթայթելու ամբաստանութեամբ հինգ ամիսէ ի վեր արգէն բանտն էր :

Վառնաէ «Մշակի» դրուած թղթակցութիւն մը կըսէ թէ Աֆիոն—Գարահիսարի հայերը 500 օսմ. ոսկի զրկեր են ազգ. պատրիարքարան կարօտեալներու համար : Մինչ ուրիշ աննշան նուիրատուութիւններ լրագրաց մէջ կը տեսնուին, այս նպատի մասին բնաւ յիշատակութիւն չէ եղեր :

Մոսկուայի Պ. Մեկքօն Փանեանց, որ տարիներու ընթացքի մէջ հարուստ մատենադարան մը կազմած է, իր զրքերուն լուսագոյն մասը նուիրեր է Թիֆլիզի Ներսէսեան դպրոցին :

Հիմաի որ հեղինակները տիրացան իրենց հայրենական հողին, Թեսալիոյ, կը փութան հին վրէժներ լուծել : Այն Յուզայի զաւակները որոնք պատերազմի աակնուվրայութեան ատեն քրիստոնեաներու ինչքը կո-

չապտած էին, հիմա դատի ենթարկուեր են : Հրեայ երեւելիներ ալ հելլէն կառավարութեան զիմեով պահանջեր են որ այդ կարգի ամբաստանեալները պատժուին :

Ղալաթիա, Ռերչէմպէ-Բազար կը գտնուի այն տունն ուր ծնած է Ֆրանսացի եղբերակ մեծ բաւաստեղծը Անտուէ Դէնիէ, որ զլրատուած է Ֆրանս. յեղափոխութեան ատեն : Կ. Պուլտի Ֆրանս. գաղթականութիւնը հանդանակութեամբ մը տախտակ մը զեւեղել տուեր է այդ տան վրայ՝ բանաս եղծին յիշատակը յաւեժացնող :

Պուլտի թերթերը կը զրկեն որ մարտատան մէջ երկու ամիս առաջ բերուած սնտուկ մը վերջերս բացուելով մէջէն ուրիշ սնտուկ մըն ալ գտնուեր է որ իւրի թիթեղակալ փոքր նիւթեր կը պարունակէր . բայց տակը պարագտեղ մը տեսնուելով բացուեր է, ուսկից սուրբ, տիրամիթ և այլն գտնուեր են : Այն անձ որուն անուան զրկուած էր այս սնտուկ, ձերբակալուեր է :

Անցած չորեքշաբթի օր Պուլտի ծովային քննիչները պաթուէն գացող Լոյտի «Վէնիս» շոգեխաւին մէջ ձերբակալեր են հինգ հոգի, որոնց վրայէն արգիլուած նիւթեր ելեր են :

Վերջին լուրերու նայելով Գուռը կը շարունակէ իր ջանքերը ի Փեթերոսուրկ համադրու համար Ռուսիան որ այլևս չպրնդէ Կովկաս ապստամուող 30,000 հայ զաղթականներու վերադարձին վրայ : Մինչև ցարդ հայրենիք վերադարձող հայերը ու է արգիլել չեն հանդիպեր :

Մեր Բարիլի թղթակցը մեզ կը հաղորդէ թէ հայ նկարիչ Տ. Զաղարեան որ իր «նազիւս մօթ»երով այնքան զնահատուած է Բարիլի գեղարուեստական շրջանակներու մէջ, վերջերս ամուսնացեր է Ռուսահայ պատուաւոր ընտանիքի մը պատկանող Օր. Բիթոյէֆի հետ :

Գ. Երուանդ Մանուէլեան եթէ այսպէս շարունակէ օր մը ապահովաբար Հայ Էտիսըն մը պիտի դառնայ : Արգարեւ օր շանցնիլ որ իր մէկ նոր գիւտին լուրը չհասնի Բարիլիէն : Պ. Մաթիա Տիւլալ իր վերջին գասպոութեան մէջ բացատրութիւններ տալով Պ. Մանուէլեանի նոր գիւտին վրայ : մեծ զովեւտով խօսեր է երիտասարդ հայ գիտնականին վրայ :

Ա Ղ Յ Ա Ն Է Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Վառնաի Աղջկանց կրթարանին Տնօրէնուհի Օր. Արմաւելի Սահակեան կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ կրթարանին տարեկան հարցաքննութիւնները սկսած են ներկայ Յունիս 15էն եւ պիտի տեսն սասն օր :

—)(—

ԳՈՐԻՆԱԿԱՏԱՐ ԵՒ ԹԱՆՁԵԱԿԱՏԱՐ

Գիրք ամէն լեզուէ, թողթ, մեղան եւ ամէն կարգի դասական ասարկաներ, ուղղաց կը զրկեմ փութով : Հայ եւ այլ լեզուաւ թերթերու բաժանորդ գրուել ուղղաց զիւրու թիւներ : Քէօսթէնէլէն եւ այլ անգղերէ, Ամերիկա եւ այլ ուղբ գնալ փափագողաց խորհուրդ զիւրու թիւն եւ ծանօթութիւններ : Հասցէ՝

Paul Gigerian, strada mangalia No. 141 Constanta (Roumanie)

ՍԱՓՐԻՉ

—)(—

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ՛ ժամանակէ մը ի վեր աշխատելով Օթէլ Գոմէրիակի կից սափրիչ Անիէլ Եուզանօֆի քով եւ տեղոյս պուշկար եւ հայ պատուարժան յաճախորդացս վստահութիւնն առ իս գրաւած լինելով, այս անգամ մասնաւոր խնամք մը բացած եմ Ուլիցա Բրեսլաւսքա, օթէլ իմրերիակի կից :

Լիւսոյս եմ թէ պատուարժան հասարակութիւնը չպիտի զանաջ շարունակել ինձ իր քաջալերը, այցելելով այսուհետեւ իմ նոր խնամքը ուր պիտի գտնէ կանոնաւոր գործ եւ ամենամեծ մաքրութիւն :

Միխիլ Սեղուկեան
Եւ իմ ընկերս
Սերոն Ծաղիկեան

ՃԱՇՄԱՆ ԵՒ ԶՌՈՍԱՐԱՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱԲՕՐԻՆ ԺԵՇԻ ԴԵՄԸ
Կը բանեցունէ Պ. Տիգրան Թիֆլիսի
անաւ եւ ընկեր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռնար սարքուած այս հովասուն, մաքուր ու զեղական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ եւ մեծ ինքն մը կըլլայ որ հայ ու օտար փափակներն իրենց գարնանային ու ամառնային ժամադրաւոր մը ընեն զայն զբօսնելու եւ ճաշելու : Պնտոսեան ակորթաբեր հովիւրուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան առջեւ :

Հակառակ այս հրապուրիչ տաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ զիւրամասնիկի զինքի թէ ըմպելիքի թէ կերակուրնիւրու մասին :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Կ Ո Շ Կ Ա Մ Ա Ր
Մուսալա, հաճի Հասան աղաի
օթէլին տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւոր կոշիկ շինել տալ ուղղոր պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեան կեւլայ :

Գիներ գիւրամատչելի :

ՏՊԱՐԱՆ «ՇԱՐԺՈՒՄ»Ի

—)(—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւումս, հասցէտոմս, նամակադրուիս, հարսանեկան հրատիրադիր, մահազդ, ինչպէս նաեւ պրօշուռներ :

Գիներն յոյժ զիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին :

Печатница «Взаимность», Варна.